Հաստատված է
ԳՊՀ գիտական խորհրդի 2008թ.
նոյեմբերի 28-ի թիվ 3 նիստում
Ռեկտոր՝ Ռ. Խ. Հակոբյան
«28» նոյեմբերի 2008թ.

ԿԱՐԳ
ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. Ընդհանուր դրույթներ.

1. Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) քաղաքացիական պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ստեղծվում, վերակազմավորվում կամ լուծարվում է Համալսարանի ռեկտորի հրամանով
2. Հանձնաժողովը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, Համալսարանի կանոնադրության և սույն կարգի հիման վրա:
3. Սույն կարգը հաստատվում և կարող է լրացվել կամ փոփոխվել Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:
4. Համալսարանում քաղաքացիական պաշտպանության համար նախատեսվում է առանձին դասասենյակ, ինչպես նաև գույք՝ անհատական պաշտպանության միջոցներ, ռադիացիոն դոզաչափական և քիմիական հետախուզության սարքեր, հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցներ, սանիտարական և այլ գույք, որը Համալսարանի սեփականությունն է: Այդ գույքը ձեռք է բերվում և դրա պահպանությունն իրականացվում է ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Հանձնաժողովի գտնվելու վայրն է՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության 1, առաջին հարկ, 108 սենյակ:

II. Հանձնաժողովի գործունեության խնդիրներն ու գործառույթները.

6. Հանձնաժողովի խնդիրներն են՝

ա) արտակարգ իրավիճակներում Համալսարանի անձնակազմի՝ պրոֆեսորադասախոսական, վարչական, տնտեսական կազմի և ուսանողների պաշտպանությունը,

բ) Համալսարանի հակահրդեհային անվտանգության ապահովումը,

գ) Քաղաքացիական պաշտպանության նախապատրաստական միջոցառումների իրականացումը, անհրաժեշտ գույքի ձեռքբերումը և սարքին վիճակում պահպանումը, Համալսարանի անձնակազմի պատսպարման, տարհանման և այլ հարցերի լուծումը:

7. Հանձնաժողովի հիմնական գործառույթներն են՝

ա) Համալսարանի քաղաքացիական պաշտպանության և հակահրդեհային անվտանգության գծով պլանների մշակումը,

բ) Քաղաքացիական պաշտպանության պլաններին համապատասխան միջոցառումների մշակումն ու իրականացումը,

գ) Համալսարանի անձնակազմի ուսուցման կազմակերպումը՝ Հանձնաժողովի անդամների և համապատասխան մասնագետների ներգրավմամբ.

դ) օրենքով սահմանված այլ գործառույթների իրականացումը:

8. Հանձնաժողովը, լինելով Համալսարանի քաղաքացիական պաշտպանության և հակահրդեհային անվտանգության գործի կազմակերպիչը, ոլորտում իրականացնում է առանձնահատուկ գործունեություն՝ ուսուցման կազմակերպում, անհրաժեշտ գույքի ձեռքբերման ուղիների մատնանշում, անձնակազմի պատսպարման և տարհանման հարցերի ներկայացում ու լուծում, ուսումնական վարժանքների պլանավորում, իրականացում և այլն:

III. Կառուցվածքը և կառավարումը.

9. Հանձնաժողովը անմիջականորեն ենթարկվում է Համալսարանի ռեկտորին:

10. Հանձնաժողովի կազմի մեջ մտնում են `

ա) Համալսարանի տնտեսական գծով պրոռեկտորը (Հանձնաժողովի նախագահ),

բ) ճարտարագետը,

գ) էներգետիկը,

դ) պարետները,

ե) հսկիչները,

զ) ինչպես նաև այլ տնտեսական աշխատակիցներ:

11. Հանձնաժողովի աշխատանքները ղեկավարում է Հանձնաժողովի նախագահը, որին նշանակում և պաշտոնից ազատում է Համալսարանի ռեկտորը:

12. Հանձնաժողովն իրականացնում է «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված գործառույթներ, ինչպես նաև կատարում է քաղաքացիական պաշտպանության և հակահրդեհային անվտանգության ապահովման վերադաս մարմինների կազմակերպական ցուցումները:

13. Հանձնաժողովն ունի քարտուղար:

14. Հանձնաժողովը պատասխանատվություն է կրում Հանձնաժողովի աշխատանքների, ինչպես նաև համապատասխան գույքի համար:

IV. Հանձնաժողովի աշխատակարգը.

15. Հանձնաժողովի նիստերը հրավիրվում են տարին երկու անգամ: Արտահերթ նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության՝ ռեկտորի որոշմամբ:
16. Հանձնաժողովի նիստերը վարում է Հանձնաժողովի նախագահը՝բացելով նիստը, ներկայացնում է օրակարգը:

17. Հանձնաժողովի անդամները կարող են օրակարգի համար առաջարկել հարցեր, որոնք դրվում են քվեարկության:
18. Հանձնաժողովի քարտուղարը կազմում է նիստերի արձանագրությունը, որոնք ստորագրում են Հանձնաժողովի նախագահը և քարտուղարը:
19. Հանձնաժողովն ընդունում է որոշումներ, որոնք կենսագործվում են Համալսարանի ռեկտորի հրամանով: